# Աղվորիկ

Վարչական ղեկավար՝ Ղարիբջանյան Նար

Հեռ + 374 093-89-08-67

**Մակերես՝** 20կմ$^2$

**Բնակչություն՝** 142

aghvorik.shirak@mta.gov.am

Նախկինում համայնք Ամասիայի տարածաշրջանում, Ամասիա գյուղից 18կմ հյուսիս, մարզկենտրոնից գտնվում է 42կմ հեռավորության վրա: Նախկինում մտել է Կարսի մարզի կարսի օկրուգի մեջ և ունեցել է Ենիել, Կարանամազ, Ղարանամազ, Օրթուլու-սանջաղ անվանումները: Աղվորիկ է վերանվանվել 1991 թ-ին:
Գյուղը գտնվում է Աշոցքի սարավանդում, Ջավախքի լեռնաշղթայի ստորոտում՝ ծովի մակարդակից 2050մ բարձրության վրա: Կիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են և մերձալպյան մարգագետինները:
Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1828-30թթ գաղթել է Արևմտյան Հայաստանի Խնուսի և Բասենի գավառներից: 1896 թ-ին գյուղն ունեցել է 285, 1897 թ-ին՝ 406, 1926թ-ին՝ 457, 1939 թ-ին՝ 595, 1959 թ-ին՝ 703, 1970 թ-ին՝ 1072, 1979 թ-ին՝ 1091 ադրբեջանցի բնակիչ: 1988-1989թթ հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին տեղի ադրբեջանցիները տեղափոխվել են Ադրբեջանի Հանրապետություն, գյուղում վերաբնակվել են հայ ընտանիքներ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 142 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 42%, կանայք՝ 58 %: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 54%, հետաշխատունակներ՝ 17%: Ունի 24 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, կապի հանգույց:
Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 108հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 536 և 262 հեկտար:
Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Զբաղվում են նաև հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Աղվորիկ

Ինդեքս՝ 2702